ՊԵՏՐՈՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԳԷՈՐԳԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ 140-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Այսօր ոգեկոչում ենք յիշատակը Հայոց Մեծագործ Հայրապետի, որ սրանից 140 տարի առաջ աներեւակայելի դժուարին պայմաններում, անդուլ ջանքերի գնով Արարատեան դաշտի սրտում՝ Վաղարշապատում, հիմնադրեց Գէորգեան հոգեւոր ճեմարանը: Շատ շուտով ուսումնական այդ հաստատութիւնը դարձաւ հայութեան մտաւոր կեանքի զարգացման նշանաւոր կենտրոններից մէկը: Այսօր ոգեկոչում ենք նաեւ Գէորգեան ճեմարանի հիմնադրման 140-րդ տարեդարձը: Զոյգ նշանակալից յիշատակներ, որ այնքան քաղցր են ու նուիրական իւրաքանչիւր խոհուն հայի համար:

Անշուշտ, Ճեմարանի հիմնադրումն ու նրա գործունէութիւնը, նշանակութիւնը վիթխարի են հայութեան մտաւոր կեանքում, եւ անուրանալի է այս բնագաւառում հիմնադրի ունեցած դերակատարութիւնը: Սակայն համընդհանուր արժեւորման ու գնահատականի այս յեղեղում անարդարացիօրէն մոռացուել է, աւելի ճիշտ՝ յետին դիրք է մղուել Վեհափառի գործունէութեան արդիւնքների գնահատումը այլ բնագաւառներում: Իսկ Վեհափառի գործունէութեան ոլորտները բազմազան են ու նշանակալից, եւ դրանք էլ նրան ապահովեցին փառք ու մեծարանք:

Օծուելուց անմիջապէս յետոյ Գէորգ Դ.-ն զարկ է տուել դպրոցաշինութեանը: Իր հայրապետական գործունէութեան 16 տարուայ ընթացքում նա գիւղական բնակավայրերում հիմնադրել է 100-ից աւելի դպրոց: Նրա ջանքերի շնորհիւ է, որ հայ ժողովրդի մտաւոր մակարդակը բարձրացել եւ առաջնակարգ տեղ է գրաւել Ռուսական կայսրութեան տարածքում:

Հայրապետը նշանակալից դերակատարութիւն է ունեցել եկեղեցաշինութեան ասպարէզում: Հանգանակութիւն է կազմակերպել Մայր Տաճարի վերանորոգութեան համար եւ ձեռնամուխ եղել նորոգման աշխատանքներին: 1868 թ. Տաճարի արեւելեան կողմում՝ ամբողջ լայնութեամբ կառուցուել է եկեղեցապատմական թանգարանի համար կցաշէնք, որտեղ ի պահ են տրուել եկեղեցական կիրառական արուեստի բացառիկ արժէքներ: Նորոգել է տուել Ս. Գայիանէ վանքը, այստեղ կառուցել կամարակապ դարպաս, միաբանների համար բնակելի շէնքեր: Բիւրականում կառուցել է կաթողիկոսական ամառանոց (1872 թ.) նոր յօրինուածքով, միանգամայն նոր եկեղեցի՝ Օշականում գտնուող Ս. Մեսրոպ Մաշտոց աւերակուած եկեղեցու տեղում (1873-1879 թթ.), յուշակոթող կանգ-

նեցրել Վահան Ամատունու գերեզմանի վրայ, վերանորոգել տուել բազմաթիւ եկեղեցիներ:

Միւս բնագաւառը, որ անմիջապէս յայտնուել է Հայրապետի ուշադրութեան կենտրոնում, անցեալի հայ հոգեւոր ժառանգութեան քիչ յայտնի կամ ընդհանրապէս չտպագրուած երկասիրութիւնների հրատարակութեան անհրաժեշտութիւնն էր: Այսպէս՝ նրա հոգածութեամբ են հրատարակուել Զաքարիա Սարկաւագ Քանաքեռցու «Պատմագրութիւն» (հատ. 1-3, 1870), Աբրահամ Կրետացու «Պատմագրութիւն անցիցն իւրոց եւ Նատր շահին պարսից» (1870), «Ընտիր պատմութիւն Դաւիթ Բէգին» (1871), Սիմէոն Երեւանցու «Ջամբռ» (1873), Մխիթար Գօշի «Դատաստանագիրք Հայոց» (1880) պատմական երկասիրութիւնները:

Անգնահատելի է Վեհափառի վաստակը կրօնագիտական ու եկեղեցագիտական երկասիրութիւններ հրատարակելու ուղղութեամբ: Նրա կարգադրութեամբ են տպագրուել «Նոր Կտակարան» (1867), «Ճաշոց» (1872), «Աւետարան Իւղարերից չորից Սուրբ Աւետարանչաց» (1875), «Ժամագիրք» (1878), «Մաշտոց» (1879), «Պարտէզ հոգեւոր» (1882) գրքերը:

Գէորգ Դ. Կաթողիկոսը նաեւ հմուտ ձայնագրագէտ էր: Նա ձեռնամուխ է եղել Հայոց Եկեղեցու բուն եղանակները փրկելու նուիրական գործին: Հայրապետը հետեւողական աշխատանք է տարել հայկական բոլոր եկեղեցիներում միակերպ ժամերգութիւն մտցնելու ուղղութեամբ: Նրա անմիջական մասնակցութեամբ (ինքն էր երգում) յայտնի երաժշտագէտ Նիկողոս Թաշճեանը գրառում է հայոց հոգեւոր երգերի ձայնագրեալ գրքերը՝ «Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի» (1874), «Ձայնագրեալ Շարական հոգեւոր երգոց» (1875, 1884), «Ձայնագրեալ քաղուածք օրհնութեանց» (1882):

Նշուած վիթխարի աշխատանքներն իրականութիւն դարձնելու համար Հայրապետը նախապէս բարեկարգել է Մայր Աթոռի վթարային ու անխնամ տպարանը, այն համալրել Վիեննայից, Փարիզից, Ամստերդամից բերուած տպագրական նորագոյն սարքաւորումներով, տառատեսակներով եւ որակեալ տպագրական թղթով: 1868 թ. նորոգեալ տպարանը սկսում է իր գործունէութիւնը: Նոյն ժամանակ Վեհափառի ջանքերով լոյս է տեսնում Մայր Աթոռի կրօնագիտական, պատմագիտական, բանասիրական «Արարատ» ամսագիրը, որը շուտով դառնում է հայագիտական ու աստուածաբանական լաւագոյն հանդէսներից մէկը գիտական աշխարհում: Այն իր շուրջն է համախմբում նախանձախնդիր ու կարող մտաւոր ուժերին: Վեհափառի նախաձեռնութեամբ յօդուածագիրներին վճարուել է հոնորար՝ միանգամայն նորութիւն հայ լրագրութեան մէջ:

Յիրաւի, վիթխարի ու անսակարկ ծառայութիւն պաշտելի ժողովրդին ու Հայոց Սուրբ Եկեղեցուն:

Իր ժամանակների համար մեծ անհատը մեծ է նաեւ բոլոր ժամանակների համար: Ասուածն իրաւամբ ու ամբողջապէս վերաբերում է նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Դ. Քերեստէճեան Կոստանդնուպոլսեցուն: